

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ



ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԻՆՆ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓԱԳԻՐ	6
ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕՐՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	9
ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ	11
1. Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման հետևանքով տրամադրված վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի մոնիթորինգի վերաբերյալ 1224-12001	11
2. 1058-11001 Էկոնոմիկայի ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիթորինգ.....	12
ԽԵՂԱԹՅՈՒՌՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ	15
3. 1058-11001 Էկոնոմիկայի ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիթորինգ ծրագրի շրջանակում Նախարարության աշխատակիցների պարգևատրման վերաբերյալ.....	15
ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ	18
4. Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11001 միջոցառման շրջանակներում «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ին հատկացված դրամաշնորհի վերաբերյալ.....	18
5. Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11001 միջոցառման շրջանակներում ձեռք բերված առողջապահական և լաբորատոր նյութերի վերաբերյալ.....	21
5.1 Կենդանիների դաբաղ հիվանդության նկատմամբ պատվաստանյութի գնման հետ կապված բանկային երաշխիքի վերաբերյալ:	21
5.2 Կենդանիների դաբաղ հիվանդության նկատմամբ պատվաստանյութի գնման ծավալների պլանավորման վերաբերյալ.....	23
6. Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի լաբորատոր փորձաքննության միջոցառումներ՝ 11003 միջոցառման շրջանակում ՀԱԲԼԾԿ-ի կողմից մատուցված ծառայությունների վերաբերյալ	25

6.1 ԳԾԿ-ի և ՀԱԲԼԾԿ-ի միջև կազմված և երկկողմանի հաստատված ընդունման-հանձնման ակտերի վերաբերյալ.....	26
6.2 ՀԱԲԼԾԿ-ի և ԳԾԿ-ի հետ կնքված պայմանագրերի պլանային ցուցանիշների վերաբերյալ.....	27
7. Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման 1022-12001 ծրագրի վերաբերյալ	28
8. Ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման՝ 1224 ծրագիր Կորոնավիրուսով (COVID-19) պայմանավորված մեկուսացված անձանց կեցության ապահովում՝ 11001 միջոցառման վերաբերյալ.....	30
ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅ ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՑ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԻՆՆ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ	32
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ	50

**Հաշվեքննության
հիմքը**

ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 193-Ա որոշում:

**Հաշվեքննության
օբյեկտը**

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն:

**Հաշվեքննության
առարկան**

2020 թվականի ինն ամիսների պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:

**Հաշվեքննության
չափանիշները**

1. «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք,
2. ՀՀ պետական բյուջեի 2020 թվականի ինն ամիսների կատարողականի վերաբերյալ հաշվետվություն,
3. «Գնումների մասին» ՀՀ օրենք,
4. ՀՀ կառավարության 2019 թվականի մարտի 7-ի թիվ 184-Լ որոշում,
5. «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենք,
6. «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք,
7. ՀՀ աշխատանքային օրենսգիրք,
8. Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագրեր և այլն,
9. ՀՀ Կառավարության 2020 թվականի մարտի 31-ի «Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման առաջին, երկրորդ եվ երրորդ միջոցառումների շրջանակում տրամադրվող օժանդակության գործիքների կիրառման կարգերը հաստատելու մասին» թիվ N 416-Լ որոշում,
10. ՀՀ Կառավարության 2020 թվականի մարտի 26-ի «Կորոնավիրուսի տնտեսական հետեվանքների չեզոքացման առաջին միջոցառումը հաստատելու մասին» թիվ N 355-Լ որոշում ,

**Հաշվեքննությունն
ընդգրկող
ժամանակաշրջանը**

2020 թվականի հունվարի 1-ից մինչև 2020 թվականի սեպտեմբերի 30-ը:

**Հաշվեքննության
կատարման ժամկետը**

2020 թվականի օգոստոսի 17-ից մինչև 2020 թվականի հոկտեմբերի 31-ը:

**Հաշվեքննության
կասեցում**

2020 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 205-Ա որոշում:

**Հաշվեքննության
վերսկսում**

2020 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 248-Ա որոշում:

Հաշվեքննության

Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, Հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համա-

մեթոդաբանությունը

պատասխանության հաշվեքննության մեթոդաբանությունների, Պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղղեցույցի համաձայն:
Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ, վերակատարում ընթացակարգերը:

Հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային ստորաբաժանում¹

Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի երրորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ Կարեն Առուստամյանը:

¹ Տվյալ հաշվեքննություն իրականացրած պաշտոնատար անձինք հաջորդիվ իրականացնելու են ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից 2020 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման հաշվեքննություն

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

- ՖԿ** Ֆինանսավորող կառույց՝ առևտրային բանկերը կամ վարկային կազմակերպությունները:
- ԳՖԿ** Նախարարության «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾԻԳ» պետական հիմնարկի Գյուղատնտեսական ֆինանսավորման կառույցը:
- ՀԱԲԼԾԿ** «Հայաստանի անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ:
- ԳԾԿ** «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ

ԱՄՓՈՓԱԳԻՐ²

2020 թվականի պետական բյուջեի կատարման հաշվեքննության շրջանակում իրականացվել է ՀՀ Էկոնոմիկայի նախարարության ինն ամիսների բյուջեի կատարողականի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություններ:

Սակայն հիմք ընդունելով COVID-19 համավարակի հետևանքով ստեղծված պայմանները և ՀՀ կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հաստատելու մասին» թիվ 1586-Ն որոշումը՝ Հաշվեքննիչ պալատի 2020 թվականի դեկտեմբերի 03-ի թիվ 205-Ա որոշմամբ հաշվեքննությունը կասեցվել է՝ ելնելով ստեղծված իրավիճակից:

Հաշվեքննիչ պալատի 2020 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 248-Ա որոշմամբ հաշվեքննությունը վերսկսվել է:

Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը հաշվեքննության օբյեկտի կողմից հիմնականում ստացվել է բավարար տեղեկատվություն հաշվեքննություն իրականացնելու համար:

Ստորև հաշվեքննությամբ արձանագրված հիմնական փաստերն են:

1058-11001 Էկոնոմիկայի ոլորտում պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիթորինգի ոլորտում առկա են խեղաթյուրումներ և հսկողության գործընթացների թերացումներ՝ կապված աշխատավարձի հետ, անհամապատասխանություններ թափուր հաստիքների չհամալրման հետ: Արձանագրվել է նաև ներքին աուդիտի գործառույթի, ըստ էության, բացակայություն:

1116-11001 Գյուղատնտեսական կենդանիների պարվաստման ոլորտում առկա են հսկողության գործընթացների թերացումներ կապված նախատեսված և արդյունքային ցուցանիշների անհամապատասխանությունների հետ, ինչպես նաև նախարարությանը բանկային երաշխիքներ ներկայացնելու հետ, նախատեսված գումարը ստանալու համար:

² Հաշվեքննիչ պալատի մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն հաշվեքննության արդյունքներն արձանագրվել և ներկայացվել է հաշվեքննության օբյեկտի ղեկավարին որը հաշվեքննության արձանագրությունն ստանալուն հաջորդող 10 օրվա ընթացքում համաձայնության դեպքում ստորագրում է այն կամ գրավոր ներկայացնում է առարկություններ և բացատրություններ: Հաշվեքննության օբյեկտի կողմից այն ներկայացվել է օրենքով սահմանված ժամկետի խախտումով: Չնայած դրան սույն ընթացիկ եզրակացությունում արտացոլված են հաշվեքննության յուրաքանչյուր արդյունքի մասով հաշվեքննության օբյեկտի դիրքորոշումը և դրա վերաբերյալ հաշվառողների արձագանքները:

1116-11003 Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի լաբորատոր փորձաքննության միջոցառումների գծով առկա են հսկողության գործընթացների թերացումներ՝ կապված ԳԾԿ-ի և ՀԱԲԼԾԿ-ի փաստացի արդյունքային ցուցանիշների անհամապատասխանությունների հետ, ինչպես նաև Նախարարության և ՀԱԲԼԾԿ-ի նշված պայմանագրերի Ծրագրի ոչ ֆինանսական /արդյունքային/ ցուցանիշների կատարման ժամանակացույցերի հետ կապված:

1224-11001 Կորոնավիրուսով (COVID-19) պայմանավորված մեկուսացված անձանց կեցության ապահովման ոլորտում առկա են խնդիրներ տեղեկատվություն տրամադրելու հետ: Տեղեկատվությունը ժամանակին և ամբողջական ստանալուց հետո հնարավոր կլինի հաշվեքննության արդյունքները ներկայացնել ՀՀ էկոնոմիկայի նախարարության տարեկան հաշվեքննության ընթացքում:

1022-12001 Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տրվող սուբսիդավորման ոլորտում առկա է հսկողության գործընթացների թերացում կապված նախարարության գյուղատնտեսական խորհրդատվության, նորարարությունների և մոնիթորինգի վարչության կողմից իրականացված մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ, մասնավորապես վարկերի օգտագործման նպատակայնության դեպքերի հետ:

Ինչն ամիսների հաշվեքննության շրջանակում նաև ուսումնասիրվել են այն անհամապատասխանությունները, խեղաթյուրումները և հսկողության գործընթացների թերացումները (այլ փաստեր), որոնք արձանագրվել էին առաջին կիսամյակի հաշվեքննության շրջանակներում: Վերջիններիս վերաբերյալ ուսումնասիրության արդյունքները ներկայացված են սույն հաշվետվության V «Հետհսկողական գործընթաց» մասում: Սակայն այն հարցերը, որոնց գծով չեն կատարվել հաշվեքննության օբյեկտի կողմից գործընթացներ, ի համեմատ վերջիս կողմից նախանշված ժամանակացույցի, կամ այն հարցերը, որոնք ընդհանրապես մերժվել են հաշվեքննության օբյեկտի կողմից, ներառվել են սույն հաշվետվության համապատասխանաբար II «Անհամապատասխանությունների վերաբերյալ գրառումներ», III «Խեղաթյուրումների վերաբերյալ գրառումներ» և IV «Հաշվեքննությամբ արձանագրված այլ փաստեր» մասերում՝ այդ հարցերը տարբերակելով «կրկնկվող կետ» վերնագրերով:

Հաշվեքննությամբ հայտնաբերվել են էական անհամապատասխանություններ, որոնք ներկայացված են սույն ընթացիկ եզրակացության 1-ից 2-րդ կետերում, որոնք համատարած չեն, սակայն միասին

վերցված էական են ՀՀ էկոնոմիկայի նախարարության 2020 թվականի պետական բյուջեի ինն ամիսների կատարման վերաբերյալ հաշվետվության համար:

Հաշվեքննությամբ հայտնաբերվել են էական խեղաթյուրումներ, որոնք ներկայացված են սույն ընթացիկ եզրակացության 3-րդ կետում, որը համատարած չի, սակայն էական է ՀՀ էկոնոմիկայի նախարարության 2020 թվականի պետական բյուջեի ինն ամիսների կատարման վերաբերյալ հաշվետվության համար:

Կարեն Առուստամյան
ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ
25-ը փետրվարի 2021 թվական

ՀՀ հաշվեքննիչ պալատ,
Բաղրամյան փող. 19, ք. Երևան,
Հայաստանի Հանրապետություն

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ³

2020 թվականի ինն ամիսներ

հազ.դրամ

Ծրագիր		Տարեկան ճշտված պլան	Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլան	Ֆինանսավորում	Փաստ	Փաստացի ծախս
Ընդամենը		38,542,541.81	31,715,841.61	14,666,397.75	13,485,230.85	13,628,585.67
1022*	Գյուղատնտեսության խթանման ծրագիր	6,649,949.10	5,734,525.50	3,311,068.40	3,270,040.49	3,267,483.19
1026	Սննդամթերքի լաբորատոր փորձաքննություններ	190,842.90	130,173.10	11,527.38	11,527.38	11,527.38
1058*	Էկոնոմիկայի ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ	2,273,407.41	1,553,465.51	1,436,734.60	1,397,358.88	1,427,441.40
1059	Բուսաբուծության խթանում և բույսերի պաշտպանություն	385,573.70	233,412.70	122,915.10	122,915.10	102,507.24
1067	Ստանդարտների մշակում և հավատարմագրման համակարգի զարգացում	30,803.40	21,562.40	9,730.00	9,730.00	16,067.70
1086	Գյուղական ենթակառուցվածքների վերականգնում և զարգացում	4,225,163.50	3,121,774.70	925,318.67	669,187.41	682,007.69

³ Աստղանիշով նշված ծրագրերի մասով կատարվել է նաև 2020 թվականի պետական բյուջեի վեց ամիսների կատարման հաշվեքննություն

1104	Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրությանը	253,120.00	192,141.00	66,280.00	66,280.00	91,280.00
1116*	Անասնաբուժական ծառայություններ	2,616,199.40	2,305,782.00	1,068,480.93	1,068,480.93	1,097,272.07
1134	Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն	1,896,310.80	1,546,822.20	1,246,941.80	412,605.80	347,780.29
1165	Ներդրումների և արտահանման խթանման ծրագիր	1,083,020.00	664,514.00	607,643.20	607,643.20	705,920.06
1187	Գյուղատնտեսության արդիականացման ծրագիր	2,159,046.30	1,256,528.90	689,618.37	689,618.37	684,450.04
1190	Զբոսաշրջության զարգացման ծրագիր	6,182,062.20	4,574,553.40	1,143,092.61	1,132,796.60	1,143,804.14
1224*	Ճգնաժամների հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման ծրագիր	10,346,278.90	10,208,679.30	3,887,346.39	3,887,346.39	3,886,262.39
8992	Նախորդ տարիների դեբիտորական և/կամ կրեդիտորական պարտքեր	-	-	-	-	5,330.78
1162	Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագիր	210,156.20	144,834.90	119,924.30	119,924.30	139,675.30
1015	Սոցիալական փաթեթների ապահովում	40,608.00	27,072.00	19,776.00	19,776.00	19,776.00

ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

1. Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման հետևանքով տրամադրված վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի մոնիթորինգի վերաբերյալ 1224-12001

Առկա է անհամապատասխանություն Նախարարության և Ֆինանսական կառույցների միջև կնքված Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման առաջին միջոցառման շրջանակներում տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման վերաբերյալ ՀՀ էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) և առևտրային բանկերի կամ վարկայանի կազմակերպությունների (այսուհետ՝ Ֆինանսական կառույց) միջև կնքված պայմանագրի 6-րդ գլխի 6.1 կետի պահանջների մասով, ըստ որի միջոցառման մոնիթորինգն իրականացնում է Նախարարությունը, սակայն այն փաստացի չի իրականացվել:

Համաձայն ՀՀ պետական բյուջեի 2020 թվականի ինն ամիսների կատարողականի վերաբերյալ ներկայացված հաշվետվության՝ ՀՀ պետական բյուջեից Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման հետևանքով տրամադրված վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման համար 2020 թվականին ՀՀ պետական բյուջեի տարեկան ճշգրիտ պլանով նախատեսվել է հատկացնել 3,500,000.00 հազ. դրամ: 2020 թվականի ինն ամիսների դրամարկղային ծախսը կազմել է 843,422.29 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 843,422.29 հազ. դրամ:

Ծրագիրն ուղղված է Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման նպատակով տնտեսվարողներին ֆինանսական օժանդակության տրամադրմանը՝ նպատակային վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման եղանակով: Ծրագիրն կարգավորվում է հետևյալ նորմատիվ իրավական ակտերի միջոցով.

- ՀՀ Կառավարության 2020 թվականի մարտի 31-ի «Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման առաջին, երկրորդ եվ երրորդ միջոցառումների շրջանակում տրամադրվող օժանդակության գործիքների կիրառման կարգերը հաստատելու մասին» (այսուհետ՝ Կարգ) թիվ N 416-Լ որոշմամբ,
- ՀՀ Կառավարության 2020 թվականի մարտի 26-ի «Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման առաջին միջոցառումը հաստատելու մասին» (այսուհետ՝ Որոշում) թիվ N 355-Լ որոշմամբ,

- Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման առաջին միջոցառման շրջանակներում տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման վերաբերյալ ՀՀ էկոնոմիկայի Նախարարություն և այսուհետ՝ Ֆինանսական կառույց միջև կնքված Պայմանագիր:

Հաշվեքննության ընթացքում պարզվել է, որ Նախարարության որևէ ստորաբաժանում լիազորված չէ մոնիթորինգն իրականացնելու համար, ինչպես նաև չի հաստատվել մոնիթորինգ իրականացնելու որևէ կարգ: Ծրագրի ողջ ընթացքում Նախարարության կողմից չի իրականացվել մոնիթորինգ:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Համապատասխան միջոցառումների ծրագրերով նախատեսված մոնիթորինգի աշխատանքների իրականացումը լինելով բավականին ծավալուն, պահանջում է լրացուցիչ ռեսուրսներ: Ներկայումս նախարարությունում քննարկվում է այս ծրագրերով մոնիթորինգի իրականացման աշխատանքների հնարավոր ձևաչափը և իրականացման մոտեցումները:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Հարցը կուսումնասիրվի ինն ամսիների բյուջեի կատարման հաշվետվության հաշվեքննության ընթացքում:

2. 1058-11001 Էկոնոմիկայի ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ

Նախարարության թափուր հաստիքների վերաբերյալ առկա է անհամապատասխանություն «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի մասով, համաձայն որի, քաղաքացիական ծառայության պաշտոնը թափուր մնալուց հետո՝ երեք ամսվա ընթացքում պետք է հայտարարվի մրցույթ, ինչը չի իրականացվել:

Կրկնվող կետ

Համաձայն ՀՀ պետական բյուջեի 2020 թվականի ինն ամիսների կատարողականի վերաբերյալ ներկայացված հաշվետվության՝ ՀՀ պետական բյուջեի թիվ 1058 Ծրագրի 11001 միջոցառման 4111, 4112, 4113 տնտեսագիտական հոդվածներով միջոցառումների շրջանակներում 2020 թվականի ինն ամիսների ընթացքում ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 1,879,102.30 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 1,252,512.73 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 1,282,351.19 հազ. դրամ:

ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2020 թվականի հունվարի 8-ի թիվ 3-Ա հրամանով հաստատվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության հաստիքացուցակը, որում ՀՀ էկոնոմիկայի նախարարի համապատասխան հրամաններով կատարվել են փոփոխություններ: Ըստ հրամանի՝ 01.09.2020թ. դրությամբ նախատեսվում է 448 հաստիքային միավոր, որից 90-ը թափուր պաշտոններ են, որը կազմում է 20%: Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանում հաստիքացուցակով նախատեսված թափուր հաստիքներն, ընդհանուր առմամբ, չեն զբաղեցվել:

«Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, քաղաքացիական ծառայության պաշտոնը թափուր մնալուց հետո՝ երեք ամսվա ընթացքում պետք է հայտարարվի մրցույթ, ինչը չի իրականացվել:

Համեմատելով հաստիքացուցակով հաստատված պաշտոններ զբաղեցնողներին և «ՀԾ-հաշվապահ» ավտոմատացված հաշվապահական ծրագրից հունվար-հունիս ընդլայնված շախմատաձև հաշվետվություններում պաշտոններ զբաղեցնող աշխատակիցների հետ, պարզվել է, որ չնայած հաստիքացուցակով թափուր պաշտոնների առկայությանը՝ թվով 9 աշխատակիցներ արտահաստիքային պայմանագրերով ընդունվել են աշխատանքի այն դեպքում երբ, համաձայն հաստիքացուցակի, առկա է թափուր հաստիք նույն պաշտոններով՝

- իրավախորհրդատու,
- խորհրդական
- մասնագետ:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Նշված թվով 9-ը արտահաստիքային աշխատանքային պայմանագրերից 7-ը ներկայումս լուծված են: Մնացած 2-ի՝ ձեռներեցության զարգացման վարչության մասնագետի և գյուղատնտեսության առաջնային արտադրանքի վարչության առանձին գործառույթներ համակարգող խորհրդականի հետ կնքված աշխատանքային պայմանագրերի գործողության ժամկետները երկարաձգվել են համապատասխանաբար մինչև 2021 թվականի մարտի 31-ը և դեկտեմբերի 30-ը:

Չնայած այն հանգամանքին, որ նախարարության հաստիքացուցակում առկա է կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող խորհրդականի թափուր հաստիքներ, սակայն հաշվի է առնվել, որ նշված պայմանագրով սահմանված գործառույթները պետք է իրականացվեն որոշակի ժամանակահատվածում և նպատահարմար է համարվել կնքել որոշակի ժամկետով պայմանագիր:

Արտահաստիքային «մասնագետ»-ի հետ պայմանագիրը կնքվել է որոշակի ժամկետով՝ քաղաքացիական աշխատանք իրականացնելու համար, իսկ նախարարության հաստիքացուցակում առկա պաշտոնները քաղաքացիական ծառայության պաշտոններ են:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

3. 1058-11001 Էկոնոմիկայի ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ ծրագրի շրջանակում Նախարարության աշխատակիցների պարգևատրման վերաբերյալ

Առկա է խեղաթյուրում կապված Նախարարության կողմից սխալ հոդվածի ներքո պարգևատրման ծախսերի ներկայացման հետ: Նշվածը չի համապատասխանում 2007թ. հունվարի 9-ի «ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի հրամանով հաստատված ՀՀ բյուջեային և հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները հաստատելու մասին» թիվ 5 հրամանի հավելված 16-ի հետ:

Համաձայն ՀՀ պետական բյուջեի 2020 թվականի ինն ամիսների կատարողականի վերաբերյալ ներկայացված հաշվետվության՝ ՀՀ պետական բյուջեի թիվ 1058 Ծրագրի 11001 միջոցառման 4111, 4112, 4113 տնտեսագիտական հոդվածներով միջոցառումների շրջանակներում 2020 թվականի ինն ամիսների ընթացքում ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 1,879,102.30 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 1,252,512.73 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 1,282,351.19 հազ. դրամ:

1058-11001 ծրագրի՝ «Էկոնոմիկայի ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ» միջոցառման շրջանակում կատարվել են փաստացի ծախսեր 411100 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ», 411200 «Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ» և 411300 «Քաղաքացիական, դատական և պետական այլ ծառայողների պարգևատրում» հոդվածներով: Ստորև ներկայացված աղյուսակում նշված է այդ հոդվածների գծով աշխատակիցների հաշվարկված վճարները՝ տարանջատելով պարգևատրումները մնացած այլ վճարներից, որոնք ներկայացված են «Հիմնական աշխատավարձ» սյունակում՝

Հոդվածի կոդ	Հոդվածի անվանում	Հիմնական աշխատավարձ	Պարգևատրում	Պարգևատրման տեսակարար կշիռը հիմնական աշխատավարձում
4111	Աշխատողների աշխատավարձեր և հավելվածարներ	865,062.7	141,837.4	16%
4112	Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	-	153,150.2	0%
4113	Քաղաքացիական, դատական և պետական այլ ծառայողների պարգևատրում	-	122,300.8	0%
	Ընդամենը	865,062.7	417,288.4	48.2 %

«Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն պետական ծառայողին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող կամ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված համապատասխան լիազորություններով օժտված այլ պաշտոնատար անձը հատուկ առաջադրանքների և(կամ) որակյալ աշխատանքի կատարման համար պետական ծառայողներին կարող է պարգևատրել աշխատավարձի ֆոնդի տնտեսված միջոցներից և (կամ) օրենքով չարգելված այլ աղբյուրներից:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված համապատասխան միջոցների շրջանակներում նախարարության աշխատողներին պարգևատրումները տրվում են նախարարի համապատասխան հրամանների համաձայն, որոնցում հստակ նշվում է նաև պարգևատրելու հիմքը՝ «աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու և հատուկ առաջադրանքների կատարման համար», ինչը համարժեք է «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքում «հատուկ առաջադրանքների և(կամ) որակյալ աշխատանքի կատարման համար» ձևակերպմանը: Յուրաքանչյուր աշխատողի կողմից կատարված որակյալ աշխատանքի փաստաթղթավորված հիմնավորում չի տրվել՝ դրա ձևաչափի օրենսդրական պահանջի բացակայությամբ

պայմանավորված, պարզևատրումների տրամադրման հաստատված որևէ իրավական ակտով համապատասխան կարգ չի հաստատվել, ինչպես նաև խելամիտ չի համարվել շուրջ 400 աշխատակցի վերաբերյալ անհատական հիմնավորումների կազմումը:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

4. Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11001 միջոցառման շրջանակներում «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ին հատկացված դրամաշնորհի վերաբերյալ

Համաձայն ՀՀ պետական բյուջեի 2020 թվականի ինն ամիսների կատարողականի վերաբերյալ ներկայացված հաշվետվության՝ ՀՀ պետական բյուջեի թիվ 1116 Ծրագրի 11001 միջոցառման շրջանակներում 4637 տնտեսագիտական դասակարգման հոդվածով 2020 թվականի ինն ամիսների ընթացքում ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 1,059,453.30 հազ. դրամ, դրամարկղային և փաստացի ծախսը կազմել է 569,456.00 հազ. դրամ:

Նշված միջոցառման շրջանակներում 4637 հոդվածով՝ Նախարարության և ԳԾԿ-ի միջև 06.04.2020թ-ին կնքվել է պայմանագիր, պայմանագրի ընդհանուր գումարը կազմել է մինչև 1,121,273.10 հազ. դրամ: Ծրագրով նշված գումարի շրջանակներում 2020 թվականի ընթացքում հանրապետության բոլոր համայնքներում նախատեսվել է կենդանիների վարակիչ հիվանդությունների կանխարգելմանը ուղղված 11 հիվանդությունների նկատմամբ իրականացնել 8,322,498 պատվաստումներ և ախտորոշիչ միջոցառումներ: Նշված աշխատանքներն իրականացվելու են ՀՀ 10 մարզերի 38 տարածաշրջաններում ԳԾԿ-ի 38 համաճարակաբանների և մոտ 515 անասնբույժ մասնագետների միջոցով: Ծրագրի ծախսերի նախահաշվով վերը նշված գումարը նախատեսվել է համաճարակաբանների և անասնբույժների աշխատավարձերի վճարման համար:

Համաձայն ԳԾԿ-ի կողմից ներկայացված ծրագրի միջոցառման գծով արդյունքային /կատարողական/ ցուցանիշների 01.01.2020թ-ից մինչև 30.09.2020թ-ի ժամանակաշրջանի համար նախատեսվել է կատարել 575,136 հատ ախտորոշիչ միջոցառում, փաստացի կատարվել է 540,735 հատ ախտորոշիչ միջոցառում կամ 34,401 հատ ախտորոշիչ միջոցառում նախատեսվածից պակաս է կատարվել, որից 25,224 հատը բաժին է ընկնում բրուցելոզին: ԳԾԿ-ի կողմից բրուցելոզի պակաս կատարումը պատճառաբանվել է նրանով, որ կենդանիները տեղափոխվել են հեռագնա արտավայրեր: Առկա է անհամապատասխանություն նախատեսված և արդյունքային /կատարողական/ ցուցանիշների միջև, քանի որ նշված կենդանիների տեղափոխությունները պետք է կանախատեսելի լինեին և չպետք է ազդեին կատարողական ցուցանիշների վրա:

Կանախարգելիչ միջոցառումների գծով 01.01.2020թ-ից մինչև 30.09.2020թ-ի ժամանակաշրջանի համար նախատեսվել է կատարել 3,704,339 հատ պատվաստում, փաստացի կատարվել է 4,702,754 ախտորոշիչ միջոցառում կամ նախատեսվածից ավելի է կատարվել 1,073,496 հատ պատվաստում և նախատեսվածից պակաս է կատարվել 75,081 հատ պատվաստում: ԳԾԿ-ի կողմից ավելի կատարված պատվաստումների կատարումը պատճառաբանվել է անասնահամաճարակային կայուն վիճակի ապահովմամբ և 4-րդ եռամսյակի պատվաստումները տեղափոխվել են 3-րդ եռամսյակ: Պետք է նշել, որ կենդանիների պատվաստման համար նախատեսված են որոշակի ժամանակահատվածներ, օրինակ՝ դաբաղի պատվաստանյութով կովերի պատվաստումը նախատեսվում է կատարել վեց ամիսը մեկ անգամ, իսկ հորթերին 4 ամիսը մեկ անգամ և նշված տեղափոխությունները պետք է ունենան որոշակի հիմնավորվածություններ և այլն:

Ստորև աղյուսակում ներկայացվում է Ծրագրի միջոցառման գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների վերաբերյալ հաշվետվության ամփոփ տվյալները՝

Ծառայությունների մատուցում /հատ/	Նախատեսված	Փաստացի	Տարբերություն
Բրուցելոզ	546,390	521,166	25,224
Լեյկոզ	5,000	4,433	567
Տուբերկուլինիզացիա	20,522	15,136	5,386
Իսլնախտ	3,224	-	3,224
Ընդամենը ախտորոշիչ միջոցառումների քանակը /հատ/	575,136	540,735	34,401
Դաբաղ	1,125,544	1,338,991	(213,447)
Սիբիրախտ	247,485	751,974	(504,489)
Էմկար	527,063	647,569	(120,506)
Հանգուցավոր մաշկաբորբ	351,347	331,479	19,868
Խոզերի դասական ժանդախտ	437,256	382,043	55,213

Ծառայությունների մատուցում /հատ/	Նախատեսված	Փաստացի	Տարբերություն
Թոշուների Նյութասլ	1,015,644	1,250,698	(235,054)
Ընդամենը կանխերգելիչ միջոցառումների քանակը	3,704,339	4,702,754	(998,415)

Եզրակացություն

Առկա է հսկողության գործընթացի թերացում, քանի որ կենդանիների տեղափոխությունները պետք է կանխատեսելի լինեն համապատասխան ծառայությունների մատուցման համար և չպետք է ազդեն կատարողական ցուցանիշների վրա:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Ծրագրով նախատեսված միջոցառումների պլան-ժամանակացույցը կազմելիս հաշվի է առնվում տվյալ միջոցառման կատարման նախորդ ժամանակահատվածը, կենդանիների հեռագնա արոտավայրեր տեղափոխումը, սակայն ոչ միշտ է հնարավոր լինում վերջինիս կանխատեսումը՝ նախիրը կամ հոտը լիարժեք կառավարելու համար: Այս առումով հարկ է նշել, որ «Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքի 8-րդ և 9-րդ և «Տեղական ինքնակառավարման մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքների համապատասխանաբար 50-րդ և 58-րդ հոդվածները գրեթե չեն կիրարկվում, որը և հանգեցնում է կատարողական ցուցանիշների շեղման:

Ինչ վերաբերում է կենդանիների պատվաստման համար նախատեսված որոշակի ժամանակահատվածի, ապա հարկ է նշել, որ օրինակ դաբաղի դեմ պատվաստումը՝ համաձայն դաբաղի պատվաստանյութի հրահանգի, իրականացվում է ոչ միայն կովերի նկատմամբ այլ ընդհանուր հասակավոր խոշոր եղջրավոր կենդանիների՝ վեց ամիսը մեկ անգամ, իսկ այն տնտեսությունում որտեղ նախկինում իրականացվել է հակադաբաղային պատվաստումը՝ ընթացիկ տարվա հորթերն առաջին անգամ պատվաստվում են 4 ամսեկանից և հաջորդ կրկնապատվաստումը՝ ամեն 3 ամիսը մեկ անգամ: Սակայն ռիսկային գոտիներում, ինչպես նաև այն տնտեսությունում (նորաստեղծ) որտեղ նախկինում միջոցառում չի կատարվել՝ համաձայն հրահանգի, հիվանդության դեպքը կանխելու նպատակով պատվաստման ենթակա է անգամ 1 օրեկան մատղաշը՝ երկակի պատվաստումով՝ 10-20 օրվա ընթացքում, ինչպես նաև կլինիկապես առողջ կենդանիները:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Հաշվեքննողների կողմից նշված դաբաղ հիվանդության նկատմամբ պատվաստումները վերաբերվում են տարվա կտրվածքով իրականացվելիք պատվաստումներին, այսինքն հորթերի համար տարվա համար միջինը հաշվարկվում է մինչև երեք պատվաստում, իսկ կովերինը և ընդհանուր հասակավոր խոշոր եղջրավոր կենդանիներինը երկու անգամ, որը պարզաբանման մեջ նշվածից գրեթե չի տարբերվում:

Արձանագրվել է, որ պետք է կանխատեսելի լինի, իսկ կանխատեսելի լինելը չի նշանակում, որ պլանային և կատարողական ցուցանիշները ամբողջությամբ պետք է իրար հավասար լինեն:

5. Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11001 միջոցառման շրջանակներում ձեռք բերված առողջապահական և լաբորատոր նյութերի վերաբերյալ

Համաձայն ՀՀ պետական բյուջեի 2020 թվականի ինն ամիսների կատարողականի վերաբերյալ ներկայացված հաշվետվության՝ թիվ 1116 Ծրագրի թիվ 11001 միջոցառման շրջանակներում ՀՀ Էկոնոմիկայի նախարարությանը ինն ամիսների համար 4266 հոդվածով՝ «Առողջապահական և լաբորատոր նյութեր» գնման համար ճշտված պլանով նախատեսել է հատկացնել 328,976.20 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 318,185.68 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 346,976.82 հազ. դրամ:

5.1 Կենդանիների դաբաղ հիվանդության նկատմամբ պատվաստանյութի գնման հետ կապված բանկային երաշխիքի վերաբերյալ:

Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11001 միջոցառման շրջանակներում 2020 թվականի ինն ամիսների ընթացքում ձեռքբերված 318,185.97 հազ. դրամի առողջապահական և լաբորատոր նյութերից 222,371.25 հազ. դրամը բաժին է ընկել կենդանիների դաբաղ հիվանդության նկատմամբ պատվաստանյութին, որը նախատեսված 2020 թվականի մայիս ամսվա փոխարեն մատակարարվել է 2020 թվականի օգոստոս ամսին:

Այսպես, 2019 թվականի դեկտեմբերի 10-ին հայտարարվել է «ՀՀ ԷՆ-ԲՄԱՊԶԲ-19/1» ծածկագրով անասնաբուժության մեջ կիրառվող պատվաստանյութերի ձեռք

բերման մրցույթի հրավեր: Մրցույթը բացվել է 2020 թվականի հունվարի 21-ին, որին մասնակցել են Ռուսաստանի Դաշնության երկու կազմակերպություններ «Սկիֆ Ագրոս» ՍՊԸ-ն և «Կենդանիների առողջության պահպանման ֆեդերալ կենտրոն» ՖԴԲԿ, վերջինս հանդիսանում է տվյալ պատվաստանյութի արտադրողը:

Երկու մասնակիցների գնային առաջարկները հավասար են եղել և կազմել են 226,272.50 հազ. դրամ, որը հավասար է եղել պատասխանատու ստորաբաժանման կողմից սահմանված նախահաշվային գնին: Ընդ որում, պետք է նշել, որ սահմանված նախահաշվային գինը միավորի արժեքի համար երկու դրամով ավելի թանկ է քան նախորդ տարվա համար նույն արտադրողից ձեռք բերված պատվաստանյութի միավորի արժեքը, ընդհանուր առմամբ նախորդ տարի ձեռքբերման գնից թանկ է 6,242.0 հազ. դրամով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն մասնակիցների հետ վարվել են բանակցություններ, որի արդյունքում հաղթող է ճանաչվել «Սկիֆ Ագրոս» ՍՊԸ-ն 222,371.25 հազ. դրամ գնային առաջարկով, որը չի հանդիսանում պատվաստանյութն արտադրող կազմակերպությունը: Ընդ որում, պետք է նշել, որ «Սկիֆ Ագրոս» ՍՊԸ-ի գնային առաջարկը միավոր արժեքի հաշվով 0.75 դրամով ավելի թանկ է նախորդ տարվա ձեռք բերման միավորի գնից, որը կազմում է ընդհանուր գնի մեջ 2,340.00 հազ.դրամ:

2020 թվականի փետրվարի 2-ին Նախարարության և «Սկիֆ Ագրոս» ՍՊԸ-ի միջև կնքվել է պայմանագիր, պատվաստանյութի մատակարարման վերջնաժամկետը սահմանվել է 2020 թվականի մայիսի 31-ը: «Սկիֆ Ագրոս» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է բանկային երաշխիք 35,000.00 հազ. ՌԴ ռուբլու չափով, որը գործել է մինչև 2020 թվականի հունիսի 26-ը: Սահմանված ժամկետում «Սկիֆ Ագրոս» ՍՊԸ-ի կողմից պատվաստանյութը չի մատակարարվել, ժամկետը լրանալուց հետո վերջինս դիմել է Նախարարություն և երկարացրել է մատակարարման ժամկետը մինչև 2020 թվականի հունիսի 23-ը, սակայն նշված ժամկետում նույնպես պատվաստանյութը չի մատակարարվել և «Սկիֆ Ագրոս» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագիրը խզվել է:

2020 թվականի հունիսի 24-ին և 25-ին գրություններով ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը դիմել է ՌԴ «Ցենտր ինվեստ» բանկ որպեսզի բենեֆիցիար պայմանագրի ապահովման և որակի ապահովման բանկային երաշխիքներով սահմանված 267,190.00 հազ. դրամ դրամի փոխհատուցման պահանջ գումարը գանձապետական հաշվին փոխանցելու համար, սակայն այն չի փոխանցվել, քանի որ «Սկիֆ Ագրոս» ՍՊԸ-ի հետ կնքված և թարմացված պայմանագրի հիման վրա երկարացված մատակարարման ժամկետը ավարտվել է 2020 թվականի հունիսի

23-ին, իսկ բանկային երաշխիքի ժամկետը՝ 2020 թվականի հունիսի 26-ին: Այսպիսով, Նախարարությունը չի ունեցել պատշաճ ժամանակահատված բանկային երաշխիքով նախատեսված գումարը ստանալու համար, քանի որ մատակարարման ժամկետը երկարացնելիս չի պահանջել նաև բանկային երաշխիքի ժամկետի երկարացում:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Սույն ընթացակարգի շրջանակներում պատվիրատուի կողմից երաշխիքային ժամկետում բանկին ներկայացվել է պայմանագրի և որակավորման ապահովման կատարման պահանջ, ինչը սակայն բանկի կողմից անհիմն մերժվել է, սակայն պատվիրատուի կողմից բանկին ներկայացվել է նոր 09.18.11/11492-2020 գրությունը, որում հստակ նշված է բանկի մերժման անհիմն լինելը:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Հաշվեքննողների կողմից արձանագրվել է, որ Նախարարությունը չի ունեցել պատշաճ ժամանակահատված բանկային երաշխիքով նախատեսված գումարը ստանալու համար, քանի որ մատակարարման ժամկետը երկարացնելիս չի պահանջել նաև բանկային երաշխիքի ժամկետի երկարացում, իսկ ինչ վերաբերվում է գրություններին, ապա այո, գրությունները առկա են:

Եզրակացություն

Առկա է հսկողության գործընթացի թերացում, կապված նախարարության կողմից բանկային երաշխիքով նախատեսված գումարը ստանալու հետ, այն է նախարարությունը չի ունեցել պատշաճ ժամանակահատված բանկային երաշխիքով նախատեսված գումարը ստանալու համար, քանի որ մատակարարման ժամկետը երկարացնելիս չի պահանջել նաև բանկային երաշխիքի ժամկետի երկարացում:

5.2 Կենդանիների դաբաղ հիվանդության նկատմամբ պատվաստանյութի գնման ծավալների պլանավորման վերաբերյալ

«Սկիֆ Ագրոս» ՍՊԸ-ի կողմից կենդանիների դաբաղ հիվանդության նկատմամբ պատվաստանյութերի չմատակարարման հետևանքով, ՀՀ կառավարության 02.07.2020 թվականի թիվ 1146-Ն որոշման համաձայն, պատվաստանյութը ձեռք է բերվում մեկ անձից, հրատապությունից ելնելով՝ պայմանագիր կնքելով պատվաստանյութը արտադրող կազմակերպության՝ «Կենդանիների առողջության պահպանման ֆեդերալ կենտրոն» ՖԴԲԿ-ի հետ՝ «Սկիֆ Ագրոս» ՍՊԸ-ի կողմից առաջարկված 222,371.25 հազ. դրամ գնով: Պետք է նշել, որ համապատասխան ստորաբաժանման կողմից գնման հայտը ներկայացվել է նույն ծավալներով պատվաստանյութի ձեռքբերման համար, ինչը որ նախատեսվել էր տարվա սկզբի

համար, ընդ որում արդեն նշվել է, որ կովերի համար նշված պատվաստանյութով պատվաստումը կատարվում է 6 ամիսը մեկ անգամ, իսկ հորթերինը՝ 4 ամիսը մեկ անգամ: Հետևաբար, չի կատարվել ձեռքբերվելիք պատվաստանյութի ծավալի թարմացում՝ ծավալը պլանավորելով տարվա համար: Պատվաստանյութը մատակարարվել է 2020թ-ի օգոստոսի 14-ին:

Ի լրումն, ինչպես արդեն նշվեց պատվաստանյութը ձեռք է բերվել 2,340.00 հազ.դրամ ավելի թանկ գնով, քան նախորդ տարվա գինն է, ընդ որում երկու դեպքում էլ մատակարարը նույն կազմակերպությունն է:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Հարկ է նշել, որ դաբաղի դեմ պատվաստումը՝ համաձայն դաբաղի պատվաստանյութի հրահանգի, իրականացվում է ոչ միայն կովերի նկատմամբ այլ ընդհանուր հասակավոր խոշոր եղջրավոր կենդանիների՝ վեց ամիսը մեկ անգամ, իսկ այն տնտեսությունում որտեղ նախկինում իրականացվել է հակադաբաղային պատվաստումը՝ ընթացիկ տարվա հորթերն առաջին անգամ պատվաստվում են 4 ամսեկանից և հաջորդ կրկնապատվաստումը՝ ամեն 3 ամիսը մեկ անգամ: Սակայն ոիսկային գոտիներում, ինչպես նաև այն տնտեսությունում (նորաստեղծ) որտեղ նախկինում միջոցառում չի կատարվել՝ համաձայն հրահանգի, հիվանդության դեպքը կանխելու նպատակով պատվաստման ենթակա է անգամ 1 օրեկան մատղաշը՝ երկակի պատվաստումով՝ 10-20 օրվա ընթացքում, ինչպես նաև կլինիկապես առողջ կենդանիները: Տեղեկացնում են, որ Հայաստանի Հանրապետությունը 1997 թվականի դեկտեմբեր 12-ից Կենդանիների առողջության համաշխարհային կազմակերպության (այսուհետ՝ ԿԱՀԿ) լիարժեք անդամ-երկիր է և «Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում կենդանիների վարակիչ հիվանդությունները ենթակա են պարտադիր ծանուցման և գրանցման: Կենդանիների վարակիչ հիվանդությունների միջազգային ծանուցումը կատարվում է ԿԱՀԿ պաշտոնական կայք էջում՝ սահմանած ընթացակարգով և հանրապետությունում արձանագրված որևէ վարակիչ հիվանդության դեպքում, մասնավորապես դաբաղի, կարգելափակվի հանրապետության արտահանման և ներկրման գործընթացը: Այսպես օրինակ՝ դաբաղը հանդիսանում է մշտական խնդիր տարածաշրջանի երկրների համար և չնայած վերջին տարիներին մեր հանրապետությունում ի հաշիվ հակադաբաղային պատվաստումների առկա էր կայուն համաճարակային իրավիճակ, սակայն 2016 թվականին գրանցվել է հիվանդության բռնկման դեպք պայմանավորված գենտիկորեն նոր A տիպի AGVII դաբաղի վիրուսի ենթատիպով: 2016 թվականին ԿԱՀԿ պաշտոնական կայք էջում հրապարակվել է խոշոր եղջերավոր կենդանու 1 դեպք, որը տևական ժամանակ հանգեցրեց հանրապետությունից կենդանական

ծագման հումքի և մթերքի արտահանման գործընթացի արգելափակմանը /հղումը՝ «Росселхознадзор» կայք էջ/։ Ելնելով հարևան երկրներում արձանագրված դաբաղ հիվանդության անասնահամաճարակային իրավիճակից, ղեկավարվելով «Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքով, հանրապետությունում հիվանդության բռնկման և կանխման, անասնահամաճարակային կայուն իրավիճակ ստեղծելու և պահպանելու նպատակով հաշվի է առնվում նաև չկայացած կամ ուշացած մրցույթների արդյունքում պատվատման պլան-ժամանակացույցով իրականացվելիք միջոցառման ապահովումը, ուստի ձեռքբերվող պատվաստանյութի չափաքանակը յուրաքանչյուր տարի վերահաշվարկվում է համաձայն ՀՀ էկոնոմիկայի նախարարի 18.11.2019 թվականի N 1432-Ա հրամանի համաձայն։ Ինչ վերաբերում է պատվաստանյութի գնի թանկացմանը, ապա գնային առաջարկը ձևավորվել է բանակցությունների արդյունքում։

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Հաշվեքննողների կողմից նշված դաբաղ հիվանդության նկատմամբ պատվաստումները վերաբերվում են տարվա կտրվածքով իրականացվելիք պատվաստումներին, այսինքն հորթերի համար տարվա համար միջինը հաշվարկվում է մինչև երեք պատվաստում, իսկ կովերինը և ընդհանուր հասակավոր խոշոր եղջրավոր կենդանիներինը երկու անգամ։ Հաշվեքննողների կողմից արձանագրվել է, որ պատվաստանյութը ձեռք է բերվել 2020 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում և համապատասխանում է ամբողջ տարվա համար ձեռք բերվելիք քանակներին և որևէ հաշվարկ կամ պարզաբանում չի տրամադրվել հաշվեքննությանը նույն քանակների ձեռք բերման համար։ Ինչ վերաբերվում է գնի թանկացման, ապա մենք արձանագրել ենք ընդամենը տեղի ունեցած փաստը։

Եզրակացություն

Առկա է հսկողության գործընթացի թերացում, կապված նախարարության կողմից պատվաստանյութի ծավալների վերանայման և համապատասխան թվաքանակով պլանավորման հետ։

6. Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի լաբորատոր փորձաքննության միջոցառումներ՝ 11003 միջոցառման շրջանակում ՀԱԲԼԾԿ-ի կողմից մատուցված ծառայությունների վերաբերյալ

Համաձայն ՀՀ պետական բյուջեի 2020 թվականի ինն ամիսների կատարողականի վերաբերյալ ներկայացված հաշվետվության՝ ՀՀ պետական բյուջեի թիվ 1116 Ծրագրի 11003 միջոցառման շրջանակներում 2020 թվականի ինն ամիսների ընթացքում ճշգրտված պլանով նախատեսվել է հատկացնել 168,788.90 հազ. դրամ, դրամարկղային և փաստացի ծախսը կազմել է 168,788.90 հազ. դրամ:

6.1 ԳԾԿ-ի և ՀԱԲԼԾԿ-ի միջև կազմված և երկկողմանի հաստատված ընդունման-հանձնման ակտերի վերաբերյալ

ՀՀ հաշվեքննիչ պալատի 15.01.2021 թվականի թիվ ՀՊԵ-07 գրությամբ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունից պահանջվել է հաշվեքննությանը տրամադրել ԳԾԿ-ի և ՀԱԲԼԾԿ-ի միջև կազմված և երկկողմանի հաստատված ընդունման-հանձնման ակտերը կամ որևէ այլ փաստաթղթեր, որը կհաստատի ԳԾԿ-ից ՀԱԲԼԾԿ-ին նմուշների հանձնումը և նմուշների ընդունումը ՀԱԲԼԾԿ-ի կողմից:

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունից պատասխան գրությունը ստացվել է սահմանված եռօրյա ժամկետի խախտմամբ, 08.02.2021 թվականին: Նշված հարցի վերաբերյալ գրությունում նշվել է, որ ԳԾԿ-ի կողմից ՀԱԲԼԾԿ-ին տրամադրվող լաբորատոր նմուշների հանձնում-ընդունումը իրականացվում է համաձայն ներքին հաշվառման փաստաթղթերի՝ ստորագրություններով վավերացված, որոնք գտնվում են ՀԱԲԼԾԿ-ի մարզային և տարածքային ստորաբաժանումներում: Նշված ներքին հաշվառման փաստաթղթերը պարտադիր կիրառելի են բոլոր մարզերում, սակայն որևէ օրինակելի ձև սահմանված չէ: Նախարարության պատասխան գրությանը կից փաստաթղթերում վերը նշված ներքին հաշվառման փաստաթղթերը առկա չեն: Նշված ներքին հաշվառման փաստաթղթերի ուսումնասիրության նպատակով Նախարարության տարեկան հաշվեքննության շրջանակում անհրաժեշտ է ստուգման առաջադրանք իրականացնել ՀԱԲԼԾԿ-ում և ԳԾԿ-ում:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

«Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ին տրամադրվող լաբորատոր նմուշների հանձնում-ընդունումն իրականացվում է համաձայն ներքին հաշվառման փաստաթղթի՝ ստորագրություններով վավերացված, որտեղ պարտադիր ներառված են անասնատիրոջ անուն, ազգանունը, կենդանու տեսակը, նմուշառված քանակը, կենդանու պայմանական անունը, նշված փաստաթղթերը գտնվում են ՀԱԲԼԾԿ-ի մարզային և տարածաշրջանային ստորաբաժանումներում: Հարկ է նշել, որ ներքին հաշվառման փաստաթղթում վերը նշված պահանջները պարտադիր

կիրառելի են բոլոր մարզերում, սակայն միասնական որևէ օրինակելի ձև սահմանված չէ:

Հաշվի առնելով Ձեր դիտողությունը՝ ներկայումս մշակվում է ԳԾԿ-ի և ՀԱԲԼԾԿ-ի միջև երկկողմանի հաստատման ընդունման-հանձնման ակտի ձևաչափը:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Հաշվեքննության օբյեկտի կողմից ընդունվել է հաշվեքննությամբ արձանագրված բացթողումները:

6.2 ՀԱԲԼԾԿ-ի և ԳԾԿ-ի հետ կնքված պայմանագրերի պլանային ցուցանիշների վերաբերյալ

Համաձայն ՀԱԲԼԾԿ-ի կողմից Ծրագրի միջոցառման գծով արդյունքային /կատարողական/ ցուցանիշների վերաբերյալ 01.01.2020-30.09.2020թ. ժամանակահատվածի համար ներկայացված հաշվետվության՝ հաշվետու ժամանակահատվածի համար ճշտված պլանով նախատեսվել է կատարել 730,117 հատ փորձաքննություն, փաստացի կատարվել է 538,120 հատ փորձաքննություն (527,459 հատը՝ բրուցելոգի ախտորոշում): Արդյունքում, հաշվետու ժամանակահատվածի փաստացի և պլանային ցուցանիշների տարբերությունը կազմել է 191,997 հատ փորձաքննություն: Նշված շեղումը ՀԱԲԼԾԿ-ի կողմից բացատրվել է այն հանգամանքով, որ ՀԱԲԼԾԿ-ին տրամադրվել է նախատեսվածից ավելի քիչ լաբորատոր փորձաքննության ենթակա նմուշներ, սակայն չի նշվել նմուշները տրամադրող կազմակերպության անվանումը: ՀԱԲԼԾԿ-ի կողմից կատարվելիք լաբորատոր փորձաքննությունների մոտ 90%-ը կազմում է բրուցելոգի փորձաքննությունը: Հետևաբար, եթե բրուցելոգի ախտորոշման նմուշները ՀԱԲԼԾԿ-ին պետք է տրամադրվեն ԳԾԿ-ի կողմից, ապա պետք է պլանավորվեր, որ ԳԾԿ-ի պայմանագրի համաձայն նույն ժամանակահատվածում կարող է կատարել բրուցելոգի մասով ընդամենը 575,136 հատ նմուշառում, հետևաբար նշված ցուցանիշը արդեն ՀԱԲԼԾԿ-ի կողմից անհնար է կատարել: Արդյունքում առկա է անհամապատասխանություն Նախարարության կողմից կնքված ՀԱԲԼԾԿ-ի և ԳԾԿ-ի պայմանագրերի Ծրագրի ոչ ֆինանսական /արդյունքային/ ցուցանիշների կատարման ժամանակացույցերի հետ կապված, որը առաջացնում է անհամապատասխանություն նաև ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցեր:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

ՀԱԲԼԾԿ ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող լաբորատոր փորձաքննությունների թիվը երբեք չի կարող նույնական լինել ԳԾԿ-ի կողմից

տրամադրվող արյան նմուշների թվի հետ, այն պարզ պատճառով, որ բրուցելոզի նկատմամբ մարզային ստորաբաժանումներում իրականացվող փորձաքննությունների մի մասը (կասկածելի դրական արդյունքով մասը) ուղարկվում է կենտրոնական լաբորատորիա առնվազն կրկանակի ստուգման՝ վերջնական ճշգրիտ արդյունքը հաստատելու համար: Այսինքն՝ բոլոր փորձաքննությունները չեն, որ իրականացվում են «մեկ նմուշ մեկ փորձաքննություն» սկզբունքով:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Հաշվեքննողների կողմից չի նշվել, որ ԳԾԿ-ում և ՀԱԲԼԾԿ-ում տվյալ ցուցանիշները պետք է հավասար լինեն իրար, այլ ՀԱԲԼԾԿ-ում տվյալ ցուցանիշի կատարումը անհնար է, քանի որ շեղումը էական է և հետագայում տվյալ ցուցանիշների պլանավորումը կատարելիս հաշվի առնել նախորդ շեղումները:

Եզրակացություն

Առկա են հսկողության գործընթացի թերացում կապված ԳԾԿ-ի և ՀԱԲԼԾԿ-ի փաստացի արդյունքային ցուցանիշների միջև անհամապատասխանության հետ, ինչպես նաև Նախարարության և ՀԱԲԼԾԿ-ի նշված պայմանագրերի Ծրագրի ոչ ֆինանսական /արդյունքային/ ցուցանիշների կատարման ժամանակացույցերի հետ, որը առաջացնում է անհամապատասխանություն նաև ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցերի հետ:

7. Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման 1022-12001 ծրագրի վերաբերյալ

Համաձայն ՀՀ պետական բյուջեի 2020 թվականի ինն ամիսների կադարողականի վերաբերյալ ներկայացված հաշվեկշիռային՝ ՀՀ պետական բյուջեից Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման համար համար 2020 թվականին ՀՀ պետական բյուջեի տարեկան ճշգրիտ պլանով նախատեսվել է հատկացնել 4,941,047.7 հազ. դրամ: 2020 թվականի ինն ամիսների դրամարկղային ծախսը կազմել է 2,655,514.20 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 2,655,514.20 հազ. դրամ:

Հաշվետու ժամանակահատվածի ճշգրիտ պլանի և փաստացի տարբերությունը կազմել է՝ 1,800,000.0 հազ. դրամ: Շեղումը պայմանավորված է նրանով, որ լրացուցիչ ֆինանսական միջոցների համար ՀՀ կառավարության որոշումն ուշ է ընդունվել /1552-Ն որոշումն ընդունվել է 2020թ. սեպտեմբերի 17-ին/:

Ծրագիրն ուղղված է ագրոպարենային ոլորտի զարգացման ծրագրերի վարկավորմանը: Մասնակիցներն են գյուղատնտեսական գործունեություն իրականացնող ֆիզիկական և իրավաբանական անձինք (միասին՝ տնտեսվարողներ), առևտրային բանկերը կամ վարկային կազմակերպությունները (այսուհետ՝ ՖԿ), Նախարարությունը, Նախարարության «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾԻԳ» պետական հիմնարկի Գյուղատնտեսական ֆինանսավորման կառույցը (այսուհետ՝ ԳՖԿ):

Տարեկան ճշտված պլանով նախատեսվել է սուբսիդավորել 5094 տնտեսվարողների՝ վարկառուների: Հաշվետու ժամանակաշրջանի (ինը ամիս) ճշտված պլանով այն կազմել է՝ 23471 վարկառու, իսկ փաստացի վարկառուների թիվը ինը ամսում կազմել է՝ 28393 տնտեսվարող: Հաշվետու ժամանակահատվածի վարկառուների քանակի ճշտված պլանի և փաստացի տարբերությունը կազմել է՝ 4922 վարկառու: Վարկառուների թվի ավելացումը պայմանավորված է ծրագրի նկատմամբ պահանջարկի և վարկային պորտֆելի ավելացմամբ:

Նախարարության Գյուղատնտեսական խորհրդատվության, նորարարությունների և մոնիթորինգի վարչության (այսուհետ՝ Վարչություն) կողմից 2019 թվականի 4-րդ եռամսյակի և 2020 թվականի 1-ին կիսամյակի վարկառուներից 695 ընտրված վարկառուների տնտեսություններում իրականացվել է վարկերի օգտագործման նպատակայնության մոնիթորինգ: Մոնիթորինգի արդյունքում բացահայտվել է՝

- 41 հատ հիմնականում ոչ նպատակային դեպք.
- 102 հատ ոչ նպատակային դեպքեր:

Նշվածը ներկայացվել է Գյուղատնտեսական ծրագրերի մշակման, ռեսուրսների օգտագործման, կոոպերացիայի զարգացման վարչությանը՝ «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾԻԳ» պետական հիմնարկի գյուղական ֆինանսավորման կառույցին ներկայացնելու և վարկառուների վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման հնարավոր դադարեցման հարցը լրացուցիչ դիտարկելու համար: Սակայն առ այսօր Վարչությանը վերը նշված հարցի վերաբերյալ տեղեկատվություն չի տրամադրվել:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Վարչությունը «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾԻԳ» պետական հիմնարկից ստացել է համապատասխան պարզաբանումներ, իրականացվում է դրանց ուսումնասիրումն՝ ամփոփման նպատակով:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Եզրակացություն

Առկա է հսկողության գործընթացների թերացում՝ կապված նախարարության գյուղատնտեսական խորհրդատվության, նորարարությունների և մոնիթորինգի վարչության կողմից ընտրված 695 վարկառուների տնտեսություններում իրականացված վարկերի օգտագործման նպատակայնության մոնիթորինգի արդյունքում բացահայտված 41 հատ հիմնականում ոչ նպատակային և 102 հատ ոչ նպատակային դեպք հետ: Մոնիթորինգի արդյունքները ներկայացվել է գյուղատնտեսական ծրագրերի մշակման, ռեսուրսների օգտագործման, կոոպերացիայի զարգացման վարչությանը՝ «գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾԻԳ» պետական հիմնարկի գյուղական ֆինանսավորման կառույցին վարկառուների վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման հնարավոր դադարեցման հարցը լրացուցիչ դիտարկելու համար, սակայն առ այսօր վարչությանը սուբսիդավորման դադարեցման որևէ դեպքի վերաբերյալ տեղեկատվություն չի տրամադրվել:

8. Ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման՝ 1224 ծրագիր Կորոնավիրուսով (COVID-19) պայմանավորված մեկուսացված անձանց կեցության ապահովում՝ 11001 միջոցառման վերաբերյալ

«Համաձայն ՀՀ պետական բյուջեի 2020 թվականի ինն ամիսների կատարողականի վերաբերյալ ներկայացված հաշվետվության՝ ՀՀ պետական բյուջեի թիվ 1224 Ծրագրի 11001 միջոցառման շրջանակներում 2020 թվականի ինն ամիսների ընթացքում ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 3,626,430.60 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 3,030,524.01 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 3,030,524.01 հազ. դրամ:

1224 «Բնակչության սանիտարահամաճարակային միջոցառումների իրականացում» ծրագրի 11001 «Կորոնավիրուսով (COVID-19) պայմանավորված մեկուսացված անձանց կեցության ապահովում» միջոցառման համար ինն ամիսներին փաստացի ծախսվել է 3,030,524.1 հազ. դրամ, որից 747,271.4 հազ. դրամը միայն հյուրանոցային ծառայությունների համար, 1,538,621.9 հազ. դրամը միայն սննդի մատակարարման համար, 688,021.1 հազ. դրամը հյուրանոցային՝ ներառյալ սնունդ ծառայության համար: Տրանսպորտային ծախսերը կազմել են 56,609,5 հազ. դրամ:

Կորոնավիրուսով (COVID-19) պայմանավորված մեկուսացված անձանց կեցության ապահովում ծրագրի հաշվեքննության իրականացման և

հաշվեքննություն արդյունքների ամբողջական ամփոփման նպատակով 24.09.2020թ. N ՀՊԵ-405 գրությամբ ՀՀ առողջապահության նախարարությունից պահանջվել է հավելյալ տեղեկատվություն բուժում ստացողների, մեկուսացվածների, բուժհաստատությունների անձնակազմերի վերաբերյալ: Սահմանված ժամկետում տեղեկատվությունը չտրամադրելուց հետո 02.12.2020թ. ՀՊԵ-506 գրությամբ ՀՀ առողջապահության նախարարությունից ևս մեկ անգամ պահանջվել է տրամադրել պահանջվող տեղեկատվությունը: ՀՀ առողջապահության նախարարի կողմից 25.01.2021թ. N ԱԱ/001/1056-21 գրությամբ խնդրել է ՀՀ հաշվեքննիչ պալատի նախագահին տեղեկատվության տրամադրումը երկարաձգել 15 օրով: Նշենք նաև, որ ի պատասխան ՀՀ հաշվեքննիչ պալատի 15.01.2021թ. ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից 02.02.2021թ N 01/531-2021 գրությամբ ներկայացված տեղեկատվություն նույնպես տրամադրվել է թերի /բացակայում են հավելված 1,2,3 պահանջվող տեղեկատվությունը/, հակառակ ՀՀ էկոնոմիկայի նախարարի գրության, ամբողջական տեղեկատվության տրամադրման վերաբերյալ պնդմանը:

Նշված տեղեկատվությունը ժամանակին և ամբողջական ստանալուց հետո հնարավոր կլինի հաշվեքննության արդյունքները ներկայացնել ՀՀ էկոնոմիկայի նախարարության տարեկան հաշվեքննության ընթացքում:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը տրամադրել է միջոցառման իրականացման համար պահանջված անհրաժեշտ առկա ամբողջ տեղեկատվությունը: Վերլուծական բնույթի առավել մանրամասն տեղեկատվություն նախարարությունում առկա չէ:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

**ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2020
ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՑ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԻՆՆ ԱՄԻՍՆԵՐԻ
ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ**

N	Անհամապատասխանություն / խեղաթյուրում/ հսկողության գործընթացի թերացում	Վերացված է /վերացված չէ / ընթացքում է	Հիմնավորումներ	9 ամիսների հաշվեքննության արդյունք
1.	Հիմնադրամի կարիքների համար հողային աշխատանքների պայմանագրին կից տեխնիկական բնութագրի 2-րդ պարբերությամբ սահմանվել է «...մասնավորապես 2020 թվականի մարտ ամսվա առաջին կեսին 10-15 օրյա ժամկետում կատարողը պետք է իրականացնի տնկարկների ամբողջ տարածքում առկա երկաթբետոնե հենասյուների (մոտ 3000 միավոր) վերատնկման, նորոգման, լրացման եւ լարերի ձգման աշխատանքներ, նաեւ իրականացնի 2,36 հա մակերեսով տնկարկում առկա հենասյուների հանում, փոսերի խորացում (ձեռքով՝ մինչեւ 50-60 սմ, սյուների վերատնկում եւ ամրապնդում...»։ Սակայն պայմանագիրը կնքվել է մարտ ամսվա երկրորդ կեսին՝ մարտի 23-ին։ Համաձայն մարտ ամսվա աշխատանքների կատարման հանձնման ընդունման արձանագրության՝ փոսերի խորացման աշխատանքները կատարվել են ոչ թե ձեռքով, այլ տեխնիկայով՝ հատուկ տիպի տրակտորի հորատ կցորդիչի միջոցով։	Վերացված չէ	«Նորիկ Շմավոնյան» ԱԶ-ի հետ 23.03.2020թ կնքված ՀԽԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/2 պայմանագրին կից տեխնիկական բնութագրով սահմանված է եղել փոսերի խորացում /ձեռքով/, որի ընթացքում հողի կարծր շերտի ի հայտ գալով դժվարություններ է առաջացել ապահովել 50-60 սմ։ Անհրաժեշտություն է առաջացել փոսերի խորացման աշխատանքները կատարել հատուկ տիպի տրակտորի հորատ կցորդիչի միջոցով, ինչը նախորդը համաձայնեցվել է Հիմնադրամի հետ։ Հորատ կցորդիչի միջոցով փոսերի խորացումը կատարվել է կրկնակի անգամ, հողաշերտի համատարած կարծր լինելու պատճառով, և Կատարողը պայմանագրի գնի փոփոխություն չի	Հարցը հաջորդ ընթացքում։ կուսումնասիրվի հաշվեքննության

			պահանջել: (Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամ)	
2.	Հիմնադրամի կարիքների համար այգիների պահպանման ծառայությունների մատուցման պայմանագրով սահմանված հանձնման ընդունման արձանագրության համաձայն, մարտի 23-ից մինչև 31-ն ընկած ժամանակահատվածում (6 աշխատանքային օր) ծառայությունների դիմաց կատարողին վճարման ենթակա գումարը կազմել է՝ 1,890,0 հազ. դրամ՝ համաձայն հանձնման-ընդունման արձանագրության: Մոլախոտերի դեմ պայքարը, համաձայն Հիմնադրամի ըստ ամիսների կատարված գնահաշվարկի, նախատեսվել էր կատարել մայիս ամսին, սակայն վճարման հանձնարարագրում ներկայացվել է մարտ ամսվա համար:		ՀՀ Կառավարության 04.05.2020թ. «Գնման գործընթացի կազմակերպման մասին» N 526-Ն որոշման 108-րդ կետի՝ «Պայմանագրի կատարման նկատմամբ նախնական հսկողությունն իրականացնում է պատասխանատու ստորաբաժանումը: Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի և գնման պայմանագիր կնքած անձի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, որի ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը: Ըստ ՀՀ ֆինանսների նախարարի 2017թ հուլիսի 18-ի N 356 հրամանի հավելվածի 8-րդ կետի՝ «Վճարման ենթակա գումարը» բաժնում նշվում է տվյալ ժամանակահատվածում փաստացի մատակարարված ապրանքի, կատարված աշխատանքի և մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարը», որն ըստ ժամանակացույցի հաստատված է մեկ թվով, այլ ոչ թե ըստ աշխատանքների բացվածքի գների:	Հարցը հաջորդ ընթացքում: կուսումնասիրվի հաշվեքննության

			Մոլախոտերի դեմ պայքարն առհասարակ կրում է շարունակական բնույթ, իսկ այս տարվա առատ տեղումներով պայմանավորված անհրաժեշտություն է առաջացել դրանք հեռացնել ոչ միայն մարտ ամսին, այլև յուրաքանչյուր ամիս: Բացի այդ, հավելյալ աշխատանքներ կատարելու համար կատարողը լրացուցիչ գումար չի պահանջել: Գյուղատնտեսական աշխատանքները կատարվում են ոչ միայն աշխատանքային, այլև նաև հանգստյան օրերին (Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամ)	
3.	Հիմնադրամը 2020 թվականի փետրվարի 4-ին կնքել է թիվ 67104-0220 պայմանագիրը «Pect7ApT) UMC-ի հետ Prowein Dusseldorf գինիների եւ ակոհոլային խմիչքների միջազգային ամենամյա ցուցահանդեսում տաղավարի կառուցապատման աշխատանքներն իրականացնելու համար 16,386.0 հազ. դրամ գումարով: Առկա է անհամապատասխանություն կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 16-րդ, 17-րդ կետերի եւ 2-րդ կետի 1-ին ենթակետի հետ:	Ընթացքում է	2021թ նախատեսված ցուցահանդեսի իրականացման դեպքում, ամբողջ գործընթացը կկատարվի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի համաձայն: (Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամ)	Հարցը կուսումնասիրվի հաջորդ հաշվեքննության ընթացքում:
4.	Հիմնադրամը ProWein Dusseldorf գինիների եւ ակոհոլային խմիչքների միջազգային ամենամյա ցուցահանդեսում տաղավարի կառուցապատումն իրականացնելու նպատակով վճարել է 31,300 եվրոյին համարժեք 16,386.0 հազ. դրամ, որը հանդիսանում է պայմանագրի ընդհանուր գումարի դիմաց 100 տոկոս կանխավճար: «Գնումների	Վերացված է	Prowein ցուցահանդեսի տաղավարի կառուցապատման համար կնքված պայմանագրի համաձայն՝ վճարումն իրականացվել է 2 փուլով, յուրաքանչյուրը 15,650 եվրո գումարի չափով: Վճարվել է 50 տոկոս	Հարցը կուսումնասիրվի հաջորդ հաշվեքննության ընթացքում:

	գործընթացի կազմակերպման» Կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի (է) պարբերության եւ 32-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն, գնման հայտով պետք է հաստատվի կանխավճարի հատկացման հնարավորությունը եւ առավելագույն չափը, իսկ հրավերով հաստատվի կանխավճարի հատկացման եւ դրա առավելագույն չափը: Կարգի 56-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված պահանջներին համապատասխան, Պայմանագրով նախատեսվել է կանխավճարի հատկացման պայման՝ առանց կանխավճարի ապահովման, որը նաեւ հակասում է Կարգի 32 րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված պահանջին, այն է՝ կանխավճարի չափը չի կարող գերազանցել ընտրված մասնակցի առաջարկած գնի 25 տոկոսը:		կանխավճար տաղավարի նախագծման, ինչպես նաև կառուցապատման անհրաժեշտ նյութերը ձեռքբերելու նպատակով, իսկ տաղավարի կառուցապատումն ավարտելուց հետո վճարվել է պայմանագրի գնի մնացած մասը, որից հետո պաշտոնական գրությամբ հիմնադրամը տեղեկացվել է 2020թ. ցուցահանդեսի չեղարկման և այն 2021թ. մարտի 21-23-ը տեղափոխման մասին: Չեղարկումից հետո կառուցապատողն ապամոնտաժել է տաղավարը և պահեստավորել հաջորդ տարվա ցուցահանդեսի համար: Հարկ ենք համարում նշել, որ ըստ ցուցահանդեսի կանոնակարգի՝ տաղավարների կառուցապատման համար սահմանվում է կոնկրետ ժամկետ, մասնավորապես, COVID-19 համավարակով պայմանավորված, 2020թ. ցուցահանդեսի համար նախատեսված է եղել բոլոր տաղավարների կառուցապատումն իրականացնել մինչև 2020թ. մարտի առաջին տասնօրյակը: (Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամ)	
5.	Հաշվեքննության շրջանակում Հիմնադրամի կողմից տրամադրվել է պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարություն (այսուհետ՝ Հայտարարություն), որով ներկայացված տեղեկատվությունը հակասում հաշվեքննության ընթացքում	Ընթացքում է	2021թ նախատեսված ցուցահանդեսի իրականացման դեպքում, ամբողջ գործընթացը կկատարվի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն	Հարցը կաջորդ կուսումնասիրվի հաշվեքննության ընթացքում:

	ծեղքերված փաստերին: Հայտարարությունում արձանագրված է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ կիրառելի չէ, քանի որ միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել: Սակայն հաշվեքննության ընթացքում պարզվել է, որ հայտ են ներկայացրել հինգ մասնակիցներ: Ուստի պետք է կիրառվեր անգործության ժամկետ:		որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի համաձայն: (Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամ)	
6.	ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2020 թվականի հունվարի 8-ի թիվ 3-Ա հրամանով հաստատվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) հաստիքացուցակը: Ըստ հրամանի նախատեսվում է 446 հաստիքային միավոր, որից 75-ը թափուր պաշտոններ են: Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանում հաստիքացուցակով նախատեսված թափուր հաստիքներն ընդհանուր առմամբ չեն զբաղեցվել: «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, քաղաքացիական ծառայության պաշտոնը թափուր մնալուց հետո՝ երեք ամսվա ընթացքում պետք է հայտարարվի մրցույթ, ինչը չի իրականացվել	Ընթացքում է	« «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ օրենք) 10-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ քաղաքացիական ծառայության պաշտոնը թափուր մնալուց հետո՝ երեք ամսվա ընթացքում հայտարարվում է մրցույթ: Միաժամանակ նույն հոդվածի 7-րդ մասի համաձայն մրցույթի թեստավորումն անցկանում են համապատասխան մարմիններն էլեկտրոնային եղանակով՝ քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակում: Քանի որ քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակը արդեն իսկ գործարկվել է՝ առ այսօր տեղեկատվական հարթակով անցկացվել է թվով 5 ներքին մրցույթ և հայտարարվել է թվով 6 արտաքին մրցույթներ: (Անձնակազմի կառավարման վարչություն)	Տես կրկնվող կետ 2:
7.	Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ 2020 թվականի ինն ամիսներին Նախարարությունում ներքին աուդիտի համակարգը	Վերացված է	Էկոնոմիկայի նախարարության ներքին աուդիտի բաժնի	Հարցը կուսումնասիրվի հաջորդ հաշվեքննության

փաստացի չի գործել: Ըստ այդմ՝ առկա է անհամապատասխանություն «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների հետ::	գործունեության դադարեցման գործընթացը իրականացվել է անձնակազմի կառավարման ստորաբաժանման կողմից՝ ՀՀ վարչապետի 06.12.2019 թ. թիվ 1827-Լ որոշման համաձայն՝ (Էկոնոմիկայի նախարարության գլխավոր քարտուղարի 09.03.2020թ.թիվ 352-Ա հրաման): Այնուհետև ներքին աուդիտի ծառայության ձեռքբերման նպատակով Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից հայտարարվել է պայմանով մրցույթ՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասը: Ընտրված մասնակցին ծանուցվել է պայմանագիր կնքելու առաջարկը և գնման ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծով ամրագրված դրույթներին համապատասխան պայմանագրի նախագիծը, որը հաղթող մասնակցի կողմից չի ստորագրվել, հետագայում բողոքարկվել է: Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածը՝ գնման գործընթացը կասեցված էր: 2020 թվականի նոյեմբերի 20-ին ՀՀ ֆինանսների նախարարության գնումների հետ կապված բողոքներ	ընթացքում: է
---	---	----------------------------

			քննող անձի կողմից 03.11.2020թ. թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/115 ծածկագրով բողոքը մերժվել է՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ: Առաջնորդվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ) ենթակետով՝ Պատվիրատուն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան միջոցներ ձեռնարկելու նպատակով դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն: (Անձնակազմի կառավարման վարչություն)	
8.	Հիմնադրամի գործադիր տնօրենի եւ քաղաքացու միջեւ 2017 թվականի հունիսի 1-ին կնքված ԱՊ թիվ 17 պայմանագրի 6-րդ կետով սահմանվել է 130,0 հազ. դրամի չափով ամսական աշխատավարձ: Սակայն համաձայն «ՀԾ-հաշվապահ» ավտոմատացված հաշվապահական ծրագրի ընդլայնված շախմատաձեւ հաշվետվության՝ տվյալ անձի հաստիքի գումարը կազմել է 250.0 հազ. դրամ: Արդյունքում, 2020 թվականի առաջին եռամսյակի կտրվածքով Հիմնադրամի աշխատակցին ավելի է հաշվարկվել 360.0 հազ. Դրամ (տես ընթացիկ եզրակացության 8-րդ կետ)	Վերացված է	2017թ հունիսի 1-ին կնքված ԱՊ/17 աշխատանքային պայմանագրի 6.1 կետում կատարվել է համապատասխան փոփոխություն 2019թ փետրվարի 2-ին կնքված համաձայնագրով՝ համաձայն Հոգաբարձուների խորհրդի թիվ 14 արձանագրության, որով հաշվապահի աշխատավարձը սահմանվել է 250,000 ՀՀ դրամ: Համաձայնագրի պատճենը տրամադրվել է հաշվեքննիչ պալատի ներկայացուցիչներին: (Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամ)	Հարցը լուծված է:
9.	Հիմնադրամի գործադիր տնօրենի եւ քաղաքացու միջեւ 2010	Վերացված է	2020թ հունվարի 20-ին կնքված ԱՊ/25	Հարցը լուծված է:

	թվականի հունվարի 20 ին կնքված ԱՊ N25 պայմանագրի 6-րդ կետով ամսական աշխատավարձ է սահմանվել 20.0 հազ. դրամ: Համաձայն աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրի, քաղաքացու 2020 թվականի հունվար ամսվա աշխատած օրերի թիվը կազմել է 8 օր: Սակայն հաշվեքննության ընթացքում պարզվել է, որ հունվար ամսվա աշխատավարձը հաշվարկվել է 9 աշխատանքային օրվա համար՝ ավելի հաշվարկելով 5625 դրամ (տես ընթացիկ եզրակացության 9-րդ կետ)		պայմանագրի 6.1 կետի համապատասխան հավաքարարի հունվար ամսվա աշխատավարձը հաշվարկելիս հաշվի չի առնվել ՀՀ Կառավարության հունվարի 27-ի աշխատանքային օրը տեղափոխելու մասին N 42-Ն որոշումը, որի արդյունքում աշխատավարձը հաշվարկվել է 9 օրվա համար: Համաձայն աշխատանքային օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ ենթակետի՝ աշխատակցի հուլիս ամսվա աշխատավարձից կատարվել է պահում ավել վճարված 5,625 ՀՀ դրամի չափով: (Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամ)	
10.	411100 Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ հոդվածի վերաբերյալ՝ ըստ ՀՀ պետական բյուջեի 2020 թվականի առաջին եռամսյակի կատարողականի վերաբերյալ ներկայացված հաշվետվության՝ ՀՀ պետական բյուջեով նշված հոդվածով 352,333.0 հազ. դրամ գումար: Նախարարության կողմից, հաշվեքննություն իրականացնելու նպատակով, տրամադրված երեք ամիսների ՀԾ հաշվապահ ավտոմատացված հաշվապահական ծրագրից հունվար-մարտ ընդլայնված շախմատաձև հաշվետվության համաձայն նշված հոդվածով փաստացի ծախսը կազմել է 304,487,04 հազ. դրամ գումար:	Վերացված է	Էկոնոմիկայի ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիթորինգ Ծրագիր 1058, միջոցառում 11001 գծով 4111 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածով 2020 թվականի առաջին եռամսյակի հաշվետվության և անալիտիկ հաշվառման տվյալների միջև 47945 հազ. դրամի տարբերությունը առաջացել է մեխանիկական սխալի/վրիպակի հետևանքով: Նույն հոդվածի վերաբերյալ կազմված և ներկայացված 2020 թվականի առաջին	Հարցը լուծված է:

			կիսամյակի հաշվետվությամբ վրիպակն արդեն իսկ ուղղված է:	
			(Ֆինանսական և հաշվապահական հաշվառման վարչություն)	
11.	2020 թվականի փետրվարի 10-ին Նախարարության և ՀԱԲԼԾԿ-ի միջև կնքվել է պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման պայմանագիր, որի շրջանակում ՀԱԲԼԾԿ-ին վճարվել է 40.670,3 հազ. դրամ և վերջինս այդ գումարի չափով ներկայացրել է կատարողականի հաշվետվություն: Համաձայն ՀԱԲԼԾԿ-ի կողմից հաշվեքննության շրջանակում ներկայացված թիվ 1116 Ծրագրի թիվ 11003 միջոցառման շրջանակներում 2020 թվականի առաջին եռամսյակում փաստացի կատարված լաբորատոր փորձաքննությունների վերաբերյալ ամփոփ տեղեկանքի՝ առաջին եռամսյակում կատարվել է 92.659 լաբորատոր փորձաքննություն, որի ընդհանուր գումարը կազմել է 29.853.8 հազ. դրամ: Այսպիսով, ՀՀ պետական բյուջեի 2020 թվականի առաջին եռամսյակի կատարողականի վերաբերյալ ներկայացված հաշվետվության թիվ 11003 միջոցառման շրջանակներում նշված փաստացի կատարված լաբորատոր հետազոտությունների համար նախատեսված ֆինանսական հաշվետվություններում փաստացի ծախսը 40.670.3 հազ. դրամի փոխարեն պետք է լիներ 29.853.6 հազ. դրամ, ինչը հանդիսանում է ֆինանսական հաշվետվությունների խեղաթյուրում:	Վերացված է	«Հայաստանի անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից առաջին եռամսյակի հաշվետվության անճիշտ ներկայացումը պայմանավորված է արդյունքային ցուցանիշները ֆինանսավորված ծավալին համապատասխանեցնելու հանգամանքով: «Հայաստանի անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված առաջին կիսամյակի հաշվետվության համաձայն, նախատեսված 469 361 հատ 145735,3 հազ. դրամ արժողությամբ փորձաքննությունների դիմաց փաստացի կատարվել են 488415 հատ 157362,4 հազ. դրամի փորձարկումներ: Այսպիսով, առաջին եռամսյակի անճշտությունը վերացվել է: (Մանրամասնության անվտանգության վարչություն)	Հարցը լուծված է:
12.	Հաշվեքննությամբ պարզվել է, որ թիվ 1116 ծրագրի 11003 միջոցառման՝ ՀԱԲԼԾԿ-ի կողմից առաջին եռամսյակում	Վերացված է	ՀԱԲԼԾԿ ՊՈԱԿ-ը լաբորատոր նմուշները («Գյուղատնտեսական	Ընդունված է, սակայն 15.01.2021թ. թիվ ՀՊԵ-07

իրականացված լաբորատոր փորձաքննությունների վերաբերյալ ամփոփ տեղեկանքի համաձայն, 92.659 հատ լաբորատոր փորձաքննություններից 91.539 հատը հանդիսանում են բրուցելոզի փորձաքննություններ: Բրուցելոզի փորձաքննությունների իրականացման համար, ՀԱԲԼԾԿ-ն ստանում է նմուշներ «Գյուղատնտեսական Ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից, որը կատարում է համապատասխան նմուշառումներ: Համաձայն «Գյուղատնտեսական Ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից առաջին եռամսյակի վերաբերյալ ներկայացված՝ Ծրագրի միջոցառման գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների վերաբերյալ հաշվետվության, աշխատանքները չեն իրականացվել և «Գյուղատնտեսական Ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ը ՀԱԲԼԾԿ-ին չի ներկայացրել նմուշ բրուցելոզի փորձաքննության համար: ՀԱԲԼԾԿ-ի և Նախարարության միջև կնքված Պայմանագրի 2.3.1 կետի պահանջների համաձայն՝ Նախարարությունը ծրագրային միջոցառումների գնահատման նպատակով պետք է իրականացնի մոնիթորինգ: Սակայն հաշվեքննության արդյունքում պարզվել է, որ Նախարարության կողմից մոնիթորինգ չի իրականացվել և չեն իրականացվել համապատասխան հսկողության գործընթացներ վերոնշյալ անհամապատասխանությունները կանխարգելելու կամ բացահայտելու և ուղղելու համար. Ըստ այդմ՝ առկա է անհամապատասխանություն Պայմանագրի 2.3.1-րդ կետի պահանջների հետ:	ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի ենթակայությամբ աշխատող համայնքային անասնաբույժների կողմից խոշոր և մանր եղջերավոր կենդանիներից վերցված արյունը) ստանում է ՀՀ ՍԱՏՄ համապատասխան ստորաբաժանման աշխատակցի (տեսուչի) ուղեկցող նամակով: ՀԱԲԼԾԿ ՊՈԱԿ-ի կողմից 2020 թվականի առաջին եռամսյակում լաբորատոր փորձաքննության (թվով 92659 հատ, որից բրուցելոզի ախտորոշում՝ 91539 հատ) ենթարկված բոլոր լաբորատոր նմուշների տեսչական ուղեկցող նամակներն առկա են և անհրաժեշտության դեպքում ՀԱԲԼԾԿ ՊՈԱԿ-ը պատրաստակամ է տրամադրելու դրանց լուսապատճենները: Հարկ է նշել, որ այդ ուղեկցող նամակները բավականին շատ են, ուստի կպահանջվի որոշակի ժամանակ դրանք լուսապատճենելու համար: (Սննդամթերքի անվտանգության վարչություն) «Հայաստանի անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից առաջին եռամսյակի հաշվետվության անճիշտ ներկայացումը	գրությամբ պահանջել ենք տրամադրել ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի համապատասխան ստորաբաժանման աշխատակցի (տեսուչի) ուղեկցող նամակները, սակայն չենք ստացել:
--	--	---

			պայմանավորված է արդյունքային ցուցանիշները ֆինանսավորված ծավալին համապատասխանեցնելու հանգամանքով: «Հայաստանի անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված առաջին կիսամյակի հաշվետվության համաձայն նախատեսված 469361 հատ 145735,3 հազ. դրամ արժողությամբ փորձաքննության դիմաց փաստացի կատարվել է 488415 հատ 157362,4 հազ. դրամի փորձարկում: Այսպիսով առաջին եռամսյակի անճշտությունը վերացվել է: Ուստի 2020 թվականի առաջին կիսամյակի կտրվածքով ՊՈԱԿ-ը ավելի գումար չի ստացել: (Ֆինանսական և հաշվապահական հաշվառման վարչություն) Այս անգամ պատասխանել են միայն սննդամթերքի անվտանգության վարչությունից, դեղնացրածը 6 ամիսների պատասխանն է	
13.	ԳՖԿ-ի և ֆինանսական կառույցի միջև կնքված պայմանագրի 3.2 կետի համաձայն՝ նախատեսվում էր, որ վարկի տրամադրման պայմանա-	վերացված է	ԳՖԿ-ի և ֆինանսական կառույցի միջև կնքված պայմանագրի 3.2 կետը փոփոխվել է և նախկինում ԳՖԿ -ին	Հարցը լուծված է:

	գրերում պետք է նախատեսված լինեն դրույթներ այն մասին, որ վարկառուին տրամադրված վարկի տոկոսադրույքը հնարավոր է սուբսիդավորվի Ֆինանսավորողի կողմից, և այդ դեպքում ԳՖԿ-ն (պայմանագրում ներկայացված է որպես Ֆինանսավորող) իրավասու է իրականացնել վարկերի նպատակային օգտագործման համապատասխանության ստուգումներ: Առաջին եռամսյակի հաշվեքննության ընթացքում պարզվել էր, որ ԳՖԿ-ի կողմից չի իրականացվել որևէ տեսակի ստուգում և պայմանագրով նախատեսված իրավասությունը փաստացի չի իրացվել: Վեց ամիսների հաշվեքննության ընթացքում ԳՖԿ-ի կողմից տրամադրվել էր պարզաբանում առ այն, որ ՀՀ Կառավարության 07.03.2019թ. թիվ 184-Լ որոշման մոնիթորինգի իրականացման գործառույթը փոխանցվել է Նախարարությանը և վարկերի տրամադրման մոնիթորինգը ամբողջությամբ վերապահված է Նախարարությանը: Այսինքն ԳՖԿ-ն ոչ թե թերացել է գործառույթը իրականացնելիս այլ ՀՀ Կառավարության որոշմամբ չի ունեցել պատվիրակված համապատասխան լիազորություն, իսկ սուբսիդավորման պայմանագրում նշված կետը պահպանվել է, ֆինանսական կառույցներից տեղեկատվություն ստանալու նպատակով: Ներկայումս Նախարարության կողմից իրականացվում է պայմանագրերի փոփոխության և լրամշակման գործընթաց, որով նշված խնդիրները կկարգավորվեն:		վերապահված վարկերի նպատակային օգտագործման համապատասխանության ստուգումների գործառույթը հանվել է: (Գյուղատնտեսական Ֆինանսավորման Կառույց)	
14.	Ծրագրին մասնակցելու համար նախապայման հանդիսացող հավաստագրի (այսուհետ՝ Հավաստագիր) տրամադրման գործընթացը կանոնակարգելու նպատակով ՀՀ Էկոնոմիկայի նախարարի 2019 թվականի ապրիլի 22-ին թիվ 93-Ա հրամանով հաստատվել է «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագրով նախատեսված հավաստագրման կարգ (այսուհետ՝ Կարգ): Հավաստագրի տրամադրումն իրականացվում է Նախարարության՝ Գյուղատնտեսական խորհրդատվության,	Վերացված է	Ծրագրին մասնակցելու համար նախապայման հանդիսացող Հավաստագրի տրամադրման նոր Կարգը և պայմանները հաստատվել է Նախարարի 08.01.2021թ. N 1-Լ հրամանով: (Գյուղատնտեսական խորհրդատվության,	Հարցը լուծված է:

	նորարարությունների և մոնիթորինգի վարչության կողմից: Երեք ամիսների հաշվեքննության ընթացքում պարզվել էր, որ Կարգում բացակայում են հստակ դրույթներ հավաստագրի տրամադրման մերժման վերաբերյալ: Եթե տնտեսվարողին մերժվում էր հավաստագրի տրամադրումը, ապա այն իրականացվում էր բանավոր կարգով՝ չհիմնավորելով այն որևէ հաստատված ձևաչափով և ընթացակարգով, ինչը հաշվեքննողների գնահատմամբ ռիսկային է դարձնում հսկողության գործընթացը: Վեց ամիսների հաշվեքննության շրջանակում Նախարարության կողմից տրամադրվել էր «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագրով նախատեսված հավաստագրման խմբագրված նոր կարգի նախագիծ, որում նախատեսված էր հավաստագրի տրամադրման մերժման պայմանները՝ հաստատված ձևաչափով: Նախատեսվում էր մինչև 2020 թվականի սեպտեմբերի 30-ը շրջանառել և հաստատել Նախարարի հրամանով:		նորարարությունների և մոնիթորինգի վարչություն)	
15.	Համաձայն ՀՀ կառավարության 2019 թվականի մարտի 7-ի թիվ 184-Լ որոշման (այսուհետ՝ Որոշում) Ծրագրի մոնիթորինգն իրականացնում է Նախարարության՝ Գյուղատնտեսական խորհրդատվության, նորարարությունների և մոնիթորինգի վարչության կողմից, վարկառու տնտեսվարող սուբյեկտներում ուսումնասիրություններ իրականացնելով: Առաջին եռամսյակի հաշվեքննության ընթացքում պարզվել էր, որ Նախարարության համապատասխան վարչության կողմից մոնիթորինգ իրականացնելու համար որևէ հաստատված ընթացակարգ չկա: Հետևաբար ողջ ընթացակարգը իրականացվում է չկանոնակարգված ձևաչափով: Համաձայն վարչության ղեկավարի՝ մոնիթորինգն իրականացվում է երկու փուլով՝ առաջնային և երկրորդային: Առաջնային փուլի գործընթացն իրականացվում է մարզային կենտրոնների աշխատակիցների միջոցով՝ կատարելով այցելություններ ընտրանքում ներառված	Ընթացքում է	«Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագրի շրջանակում շահառուների կողմից վարկային միջոցների նպատակային օգտագործման մոնիթորինգի իրականացման կարգի նախագիծը շրջանառվել է Նախարարությունում, սակայն դեռ չի հաստատվել:	Հարցը հաջորդ ընթացքում կուսումնասիրվի հաշվեքննության

	վարկառու տնտեսվարողներին: Արդյունքում կազմվում է մոնիթորինգի հարցաթերթիկ, որն ուղարկվում է վարչությանը: Իրականացված մոնիթորինգի արդյունքներն ամփոփվում և վերստուգվում են Նախարարության վարչությունում, որից հետո անհրաժեշտության դեպքում իրականացվում է երկրորդային մոնիթորինգ: Առաջին եռամսյակի հաշվեքննության ընթացքում պարզվել էր նաև, որ երկրորդային մոնիթորինգը չի փաստաթղթավորվում, ինչպես նաև նախատեսված չէ գործընթաց այն դեպքում, երբ որևէ առաջնային մոնիթորինգի գործընթաց գնահատվել է անբավարար, ինչը հսկողության գործընթացի թերացում է: Վեց ամիսների հաշվեքննության շրջանակում պարզվել էր, որ Նախարարության Գյուղատնտեսական խորհրդատվության, նորարարությունների և մոնիթորինգի վարչության կողմից տրամադրվել է պարզաբանում առ այն, որ «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագրի մոնիթորինգի իրականացման համար մշակվել է «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագրի» շրջանակում վարկառուների կողմից վարկային միջոցների օգտագործման նպատակայնության մոնիթորինգի իրականացման կարգ, որը շրջանառվել է Նախարարության ստորաբաժանումներում: Այժմ գտնվում է ստացված կարծիքների ամփոփման փուլում: Նախատեսվում է մինչև 2020 թվականի սեպտեմբերի 30-ը հաստատել Նախարարի հրամանով:			
16.	Սուբսիդավորման ծրագրի օպտիմալ իրականացման, ինչպես նաև հսկողության գործընթացների արդյունավետության բարձրացման նպատակով՝ այսուհետ կնքել եռակողմ պայմանագիր՝ Ֆինանսական կառույցների, ԳՖԿ-ի և Նախարարության միջև:	Ընթացքում է	ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի մարտի 7-ի N 184-Լ որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որով Գյուղատնտեսության ոլորտին	Հարցը հաջորդ ընթացքում: կուսումնասիրվի հաշվեքննության

			տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի օպտիմալ իրականացման, ինչպես նաև հսկողության գործընթացների արդյունավետության բարձրացման նպատակով՝ նախատեսվում է այսուհետ կնքել եռակողմ պայմանագիր՝ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն), Նախարարության «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գյուղական ֆինանսավորման կառույցի և Ֆինանսական կառույցների միջև: (Գյուղատնտեսական ծրագրերի մշակման, ռեսուրսների օգտագործման, կոոպերացիայի զարգացման վարչություն)	
17.	Առաջին եռամսյակի հաշվեքննության ընթացքում պարզվել էր, որ որոշ վարկառու տնտեսավարողների գործունեությունը ժամանակավոր դադարեցված է՝ համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի էլեկտրոնային համակարգի կամ վերջիններս հաշվառումից հանված են: Առաջին եռամսյակի հաշվեքննության ընթացքում պարզվել էր նաև, որ մի շարք տնտեսավարողների մասով առկա է ռիսկ՝ կապված վարկային միջոցների նպատակային օգտագործման հետ, որոնց մասով 2020 թվականի առաջին	Վերացված է	Ցանկում նշված վարկառուները, որոնց գործունեությունը համաձայն ՊԵԿ էլեկտրոնային համակարգի ժամանակավորապես դադարեցված է, դեռևս հիմք չի հանդիսանում, որ առկա է ռիսկ վարկերի նպատակային օգտագործման հետ կապված: Քանի որ համաձայն ՀՀ Կառավարության	Հարցը լուծված է:

	եռամսյակի ընթացքում Նախարարության Գյուղատնտեսական խորհրդատվության, նորարարությունների և մոնիթորինգի վարչության (այսուհետ՝ Վարչություն) կողմից չի իրականացվել մոնիթորինգ: Ի լրումն՝ Վարչության 2020 թվականի ընթացքում մոնիթորինգի ենթակա տնտեսվարողների ընտրանքում ներառվել են միայն 6 իրավաբանական և անհատ ձեռնարկատեր:		07.03.2019թ. թիվ 184-Լ որոշմամբ հաստատված գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի վարկերի վարկունակությունը գնահատվում է ֆինանսական հաստատությունների կողմից և ծրագրով ամրագրված չէ, որ եթե իրավաբանական անձը ժամանակավորապես դադարեցնում է գործունեությունը ուստի դա հանգեցնում է վարկի նպատակային օգտագործման ռիսկերի և կարող է դադարեցվել սուբսիդավորումը: Ավելին ներկայացված ցանկի ուսումնասիրությունից հետո պարզ էր դարձել, որ ցանկում առկա բոլոր վարկառուների վարկերը նպատակային են օգտագործվել՝ համաձայն ֆինանսական կառույցների մոնիթորինգների եզրակացության:	
18	Ստեղծել սուբսիդավորվող տնտեսվարող սուբյեկտների /վարկառու/ միասնական ռեգիստր՝ հաշվի առնելով հանրության կողմից Ծրագրից օգտվելու մեծ պահանջարկը:	Վերացված չէ	Սուբսիդավորվող տնտեսվարող սուբյեկտների /վարկառուների/ միասնական ռեգիստրի ստեղծումը դեռևս հնարավոր չէ իրականացնել՝ անհրաժեշտ ռեսուրսների բացակայության պատճառով: Միասնական ռեգիստր ստեղծելու հարցը կքննարկվի համապատասխան ռեսուրսների առկայության պայմաններում:	Հարցը հաջորդ ընթացքում: կուսումնասիրվի հաշվեքննության

			(Գյուղատնտեսական ծրագրերի մշակման, ռեսուրսների օգտագործման, կոոպերացիայի զարգացման վարչություն)	
19	Հիմնադրամի կարիքների համար ձեռքբերվող ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրություններում վճարման ենթակա գումարը ներկայացնել ոչ թե մեկ թվով. այլ ըստ աշխատանքների եւ ծառայությունների տեսակների:	Ընդունելի չէ	Համաձայն ՀՀ Կառավարության 04.05.2020թ. «Գնման գործընթացի կազմակերպման մասին» N 526-Ն որոշման 108-րդ կետի՝ «Պայմանագրի կատարման նկատմամբ նախնական հսկողությունն իրականացնում է պատասխանատու ստորաբաժանումը: Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի և գնման պայմանագիր կնքած անձի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, որի ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը: Ըստ ՀՀ ֆինանսների նախարարի 2017թ հուլիսի 18-ի N 356 հրամանի հավելվածի 8-րդ կետի՝ «Վճարման ենթակա գումարը» բաժնում նշվում է տվյալ ժամանակահատվածում փաստացի մատակարարված ապրանքի, կատարված աշխատանքի և մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարը», որն ըստ	Հարցը կուսումնասիրվի հաջորդ հաշվեքննության ընթացքում: ՀՀ ֆինանսների նախարարի կողմից Հանձնման-ընդունման արձանագրության ձևի հետ համամիտ ենք, որտեղ <<վճարման ենթակա գումարը>> բաժնում նշվում է փաստացի կատարված աշխատանքի գումարը, որը ձեր կողմից նշվել է մեկ թվով վճարման ժամանակացույցի գումարը, սակայն ինչպես նշել էինք վերևում՝ մարտ ամսվա կատարողականով սահմանված 1,505.0 հազ. դրամ գինը Ձեր կողմից ներկայացված գնահաշվարկի հետ չեր համապատասխանում, դրա համար ել անհրաժեշտություն էր առաջացել գինը ներկայացնել ըստ կատարված աշխատանքների գների բացվածքի:

			Ժամանակացույցի հաստատված է մեկ թվով, այլ ոչ թե ըստ աշխատանքների բացվածքի գների: (Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամ)	
--	--	--	--	--

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀՀ էկոնոմիկայի նախարարությանն առաջարկվում է՝

1. Առաջարկում ենք Նախարարությանը կատարել Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման առաջին միջոցառման շրջանակներում տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման վերաբերյալ ՀՀ էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) և առևտրային բանկերի կամ վարկայանի կազմակերպությունների (այսուհետ՝ Ֆինանսական կառույց) միջև կնքված պայմանագրով:
2. Առաջարկում ենք Նախարարությանը հետամուտ լինել թ
3. ափուր հաստիքների համալրման գործընթացին:
4. Առաջարկում ենք 4111 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածում չներառել պարգևատրման ծախսերը:
5. Առաջարկում ենք Նախարարությանը 1116-11001 ծրագրի շրջանակներում ձեռք բերված առողջապահական և լաբորատոր նյութերի մասով հետամուտ լինել բանկային երաշխիքով սահմանված ժամկետներին:
6. Առաջարկում ենք Նախարարությանը 1116-11001 ծրագրի շրջանակներում ձեռք բերված առողջապահական և լաբորատոր նյութերի մասով պատվաստանյութի գնման թվաքանակի պլանավորումը անելիս հաշվի առնել արդեն փոփոխված ծավալները:
7. Առաջարկում ենք Նախարարությանը 1116-11003 ծրագրի շրջանակում հետամուտ լինել ՀԱԲԼԾԿ-ի և ԳԾԿ-ի կողմից ներկայացվող արդյունքային ցուցանիշների համադրմանը և դրանից բխող ֆինանսական պարտավորությունների վերանայմանը:
8. Առաջարկում ենք Նախարարության գյուղատնտեսական խորհրդատվության, նորարարությունների և մոնիթորինգի վարչությանը տրամադրել տեղեկատվություն 1022-12001 ծրագրի շրջանակում կատարված մոնիթորինգի արդյունքում, վարկերի օգտագործման ոչ նպատակային դեպքերի մասով, վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման հնարավոր դադարեցման հարցի վերաբերյալ: